

30 ԲԱՐՍ

ՄԷԺՄՈՒՄԻ ԱՆՊԱՐ

ԲԱՐՍ 30

DIRECTION DU JOURNAL

MEDJMOUA-T-AHBAZ

65, Grand'rue de Péra, Taksim, 65

Մ. ԳՈՐԴՆԻ ԳԵՂԵՍԻԱՆ
Խմբագիր իշխան
Խմբագիր իշխան
Մեղակալ իշխան

ՀԱՐՏԵՆՊԵՆ
ԿԻՆԵՄԱՏԵՐ ՆԵՐՔ ՕԼՈՒՆՈՒՐ
Կինոսալ իշխան

مجموعة اخبار
على تقسيم جادى ٢٥

ԸՆԴԴԻՄԱԽՈՍԱԿԱՆ

Անապատային մեր հայրենիքի մասին զերիքս «Մեջմուա-ի-Ահբազ» թերթին 1790 և յետագայ թիւերուն մէջ Մ. Ա. Աստուածատուրեան ստորագրելով «Հաւատարմական» մը, զոր յոյժ զարմանքով կարդացելիք, վասն զի հակառակ մեր կրկին և երեքին հրատարակութեանց՝ յողումազիրը իբրեւանկոսակ՝ զարձակ Արքայաճառ Պետրոս Ա. կրկինայ կաթողիկոսը Անտոնեան Միաբանութեան հիմնադիր, Բրէյմայ վանքը տնկէ չիլուս և անոր ոսկրները Հոսմ Ս. Գրիգոր Լուսաւորչայ վանքը փոխադրուած կը ներկայացնէ, ինչ որ մեզի համար զբոսական վէճի մը հրաւեր կը նկատենք, և Հաւատարմական դէմ ճակատուելու վարկեան մ'իւս չենք վարանիր:

Զպիտի զարմանայինք երբեք եթէ Գեր. Աստուածատուրեանը մեր փաստերը ջրեւելն ետքը՝ իրենները իբրեւ ճշմարիտ աւանդելի, նա մանաւանդ նոր յայտնութիւններ մ'ըլլային անոնք, մինչդեռ իր նախորդաց զբաւնեւումն կրկնումն էին միայն Պատմական դէպքերը պէտք է մէկ անգիլ դիւաններով հաստատուած ըլլան, և ոչ թէ Զմառու դիւանով միայն և այն իրենն ըլլալով՝ ինչպէս մենք ցարգ հրատարակածներուն աւանդն ալ բաց ի մեր դիւանէն՝ ապացուցած ենք նաեւ ուրիշ դիւաններով և օտար պատմիչով մը, որպիսի են Բրաքանտայի և Զմառու դիւանները և Աստուածատուրեանի պատմութիւնը, նոյն շաւղին պիտի հետեւինք առաջիկայ գործութիւններուն մէջն ալ:

Նախ և առաջ կ'ուզենք հարցնել Աստուածատուրեանի թէ ինչ կը նշանակէ «Հաւատարմական» անանց բառը, զոր իր յողումազին մակագիր ընտրել է Այս անանցին արմատը «Հաւատարմական» կը նշանակէ զաւարտին պոռագած ժամը, առաւօտի դէմ» որ իր գրութեան նիւթին հետ բնաւ յարմարութիւն չունի: Ասիկայ կ'երևայ իրեն յատուկ հայերէնի մը բառ է, զոր գուցէ մենք չենք գիտեր: Մեր լեզուին մէջ թէեւ բառ բաղադրելը արտօնեալ է, բայց այն ալ ունի կանոն մը, զոր պէտք է յարգել: Այս առաջին իրադատելիքն ետքը՝ կը լուծանք յայտնել Գեր. Աստուածատուրեանի մեր շնորհակալութիւնը, որ Գեր. Անդրեան Աղեքսանդրեանին պէս ժառանգէր Յակոբ Յակոբ Պետրոս Բ. Միքայէլ Պետրոս Գ. և Բարսեղ Պետրոս Գ. կրկինայ կաթողիկոսաց Անտոնեան մակդիրը առաւ, և Զմառու կաթողիկոսարանն ալ Յակոբ Բ. էն հիմնաւած ըլլալը յիշատակելու չվարանիր: Հանդերձ այսու. զրացել է Միքայէլին զովասանաց գլխաւոր մասը, զոր Բենեդիկտոս Ժ. իր Հաստատութեան կոնգրէն մէջ կը չաւրէ. «Illud quoque laetitiam nobis attulit, quod Monachus in Patriarcham electus fuerit, juxta firmam constantemque Ecclesiae Orientalis disciplinam, quo ad episcopatum assumi prohibetur qui Monachalem Professionem non emisierit». որ է ըսել «ինչ որ մեզի ուրախութիւն կը պատճառէ, այն է որ վանական մը Պատրիարք կ'ընտրուի Արեւելեան Եկեղեցւոյ հաստատուն և մընտակայ բարեկարգութեան համեմատ, որով կ'արգիւտի Եպիսկոպոսութեան բարձ-

րանալու անոր՝ որ վանական ուսում չէ կատարած»: Բայց կը յաւելու թէ Յակոբ Բ. հիմնադիր կը կարծուի, ուրեմն Արծիւեանի հիմնադիր ըլլալն ալ կարծիքի ներքեւ կ'իյնայ, թէ և այս կրկնողը յայտնի ախալ մ'է, իսկ առաջինը անուրանալի ճշմարտութիւն, որ ապացոյցի չկարծարի, բայց մենք քանի մը ապացոյցներ պիտի չաւրենք մեր առաւանձնութիւնէն հաստատուելու համար թէ Յակոբ Պետրոս Բ. կաթողիկոսը իսկապէս Անտոնեան Միաբանութեան հիմնադիրն է: Բայց ոչ առանձինն այլ Արքայաճառ, Յովնանէն և Միաբան երեք համարով հարադասութիւն միայն, և ինքն անոնց ամենէն կրտսերն էր և իր եղբայր նաեւ «Մուրաթեան» մա կանոնը կը կրէր և ոչ Յովնանէն:

Այս Բերիացի վանապետ Մուրաթեան շուրջ եղբայրները 1707ին միտքերնին դնելով աշխարհէ հրաժարիլ՝ իրենց վանապետները կը ծախեն, և կ'սկսին իրենց տան մէջ որ ի Զուռայիսէ մասէն (նոր թաղ) միաբնակութեամբ ապրիլ իրենց և Բերիացի եղբոր առաջնորդութեան ներքեւ Հաւատարմական պատմաբան Լիւթանի կ'անցնին, որ խաղաղ, հանգիստ երկիր մ'էր կաթողիկէ իշխանաց կառավարութեան տակ, ուր երկու տեղ, Ալքար և Քիւրքի առեւտրային բնակիչ ետքը՝ Զոսմայ գլխաւորապէս մօտ Բրէյմայ (Սյգեստան) ըստած տեղը պարգեւ կ'ընդունին իրաւունքով իշխանապետ ընտանիքէն: Այս ժամանակահատիկէն մէջ Մուրաթեանը կ'երթնէ Բերիոյ, Արեւելեան Տրապիզոն և Լիւթանիս միջեւ, օգնելու համար իրենց հաւանալ եղբայր, ի Բերիա նամակ մը կը գրեն և Հ. Գրիգոր Կիւրիար հաւաքել Տոմարիկեան կրօնաւորին ձեռք, որ Նախնիկեան տաւրերովն կը դառնար, կը գրկեն զայն Կիւսէն ժԱ. Բանանտայակտին և վանաշինութեան հրաման կ'աղերսեն: Այս աղերսագիրը ստորագրուած է այսպէս.

Անարծան ծառայք Մուրաթի որդիք
Արքայաճառ, Յովնանէն, Միաբան Յակոբ
զրեւելի ի քաղաքն Հալաբ,
Շուռայիսէ մասէն
Թիւի Փրեկին ԹԶԺԸ (1718)

Այս նամակին ընդերք Բրաքանտայի դիւանին մէջ ցարգ կայ ու կը մնայ:

Արդ եթէ Արծիւեան մեր հիմնադիրն ըլլար, պէտք էր որ այս աղերսագիրը անկէ ստորագրուէր, եւ որովհետեւ Մուրաթեաններէն ստորագրուած է, ապա ուրեմն Արծիւեան մեր հիմնադիրը չէ, այլ Մուրաթեան չորս եղբայրները:

Խաղիկեան իշխանը մեզի շնորհած երկիրներուն պաշտօնականութեան կը զբոսն առաւելունէն հինգ տարի ետքը յանուն Մուրաթեան եղբայր 1721 Մարտի մէջ Արդ եթէ Արծիւեան մեր հիմնադիրն ըլլար, պէտք էր որ այս մուրաթեան անոր անունը գրուէր, և ոչ թէ յանուն Մուրաթեան եղբայր, ըսել է թէ Արծիւեան մեր հիմնադիրը չէ, այլ Մուրաթեան չորս եղբայրները:

Յակոբ Ալվատ Մարտիկեան պատրիարքը չըջաբերական մը կը հանէ ի Լիւթանի յանուն Մուրաթեան եղբայր 1731 Յուլիսի մէջ, որով կը յորդորէ իր ժողովուրդը Բրէյմայ վանուց չիլուսութեան հանդանակելու:

Լուս Արդ եթէ Արծիւեան մեր հիմնադիրը ըլլար, պէտք էր յիշեալ չըջաբերական անոր անունը գրուէր և ոչ թէ յանուն Մուրաթեան եղբայր, ըսել է թէ Արծիւեան մեր հիմնադիրը չէ, այլ Մուրաթեան չորս եղբայրները:

Այս երեք վաւերագիրաց առաջինն և երրորդին օրինակը ունիւր, իսկ երկրորդին քննարկը, որոնք պէտք էին ծանօթ ըլլալ մեր Հաւատարմական և զորս նոյնութեամբ հրատարակած ենք «Հ. Ա. 1902 Սեպտ. 1, էջ 287, 1904 Յուլ. 30, և 1906 Յուլ. 347 էջին մէջ:

Վաւերագրոց անգամ և ևս ընթացումը բաւական է համոզուելու ամենէն ծայրայեղ սկեպտիկն անգամ որ Արծիւեան մեր հիմնադիրը չէ, այլ Բերիացի վանապետ Մուրաթեան չորս եղբայրները, բայց Զմառու աշակերտք չին համոզուելու, և անպատճառ կ'ուզեն զմեզ որդեկիր ընեն Արծիւեանի: Սակայն զգալիութիւնն այն է որ մենք չենք կրնար ընդունիլ միայն մուրաթեան փաստով, զոր քիչ ետքը պիտի գտնենք, հայրագիր մը, և ուրանալ մեր հարազատ հայր թէ և ըլլայ այն աղբար, ոչ կաթողիկոս, ոչ Եպիսկոպոս, ոչ քահանայ, ոչ սուրբ և ոչ ալ հրաշագործ, հարազատութիւնը միայն բաւական է մեզի:

Վերոյիշեալ մուրաթեան Մուրաթեանը ձեռք առնելով՝ սկսած են Բրէյմայ վանքը շինել, և բնակելու չափ յառաջ տանել ետքը՝ զարդեցուցած: Վանաշինութեան հետ ունէին նաեւ Արծիւեան խոստովանող Եպիսկոպոսը ապառու. հոգը, որ Արեւելեան Տրապիզոն իրմաց Ալքար կղզեակին ամրոցին մէջ բանադրուել եղած էր վասն կաթողիկէ հաւատոյ:

Արծիւեանի աղապարհեան դէպքը Սե. Բրոքի Եպիսկոպոս Դաւիթեան, այժմ Եպիսկոպոս, իր Biografia di Abramo Pietro I. Patriarca di Cilicia պատմութեան մէջ հետեւեալ կերպով յառաջ կը բերէ. — Արծիւեանը, կ'ըսէ, հրաշքով բռնկուելով բանտապետին միամոր աղջիկը, ստոր հայրը ի նշան երախտագիտութեան խորհուրդ կուտայ դիմել բարեկամաց ձեռք Տրապիզոն Կոստակալին, և իր աղապարհները խնդրել: — Դաւիթեան կը հետեւի Հաւատարմական ալ, Բայց մենք ունինք Արծիւեանի կենսագրութեան մէջ օրինակը Զմառուէն առնուած ի 1864, որուն մէջ կ'ըսէ թէ Արծիւեան իր բանտէն յատուկ նամակաւ կը դիմէ առ Մուրաթեան Եղբայր ի Լիւթանի, որպէսզի զինքը աղատեն: Մուրաթեանը հաջիւ թէ կ'առնեն այս նամակ, կը թմար, կ'երթնան Տրապիզոն, և մեծ զգուշութեամբ գաղղիկան Գեր. Հիւսպատոս Տօրբէի երախտագիտութեան ներքեւ կը յաջողին փոխադրել զայն Գաղղիոյ Հիւսպատոսարանը, Արդ չենք գիտեր թէ այս կրկին պատմութիւններէն ո՞րն է ճիշդը: Մենք յաւելու վերջինին հաւատաւոր և հակամէտ ենք, ոչ թէ իր յաջողութեամբ մեր հիմնադրաց, այլ նոյնը հաստատող մէկէ աւելի ախանապետ անձանց զբաւոր վկայութիւնները ունենալուն համար մեր ձեռքը:

Մուրաթեանը ոչ միայն զԱրծիւեանը բանտէն կ'աղատեն, այլ և անոր Տրապիզոն մէջ ըրած պարաբերը հաստեցանելով՝ եղանակով մ'ալ կը փոխադրեն զայն ի Լիւթանի, և իրենց նորաշէն վանքին մէջ:

Նուիրեալ Յիսուսի Ամենապրկչի և Տիրամօր Կուսին, կը բնակեցնեն իբրեւ հիւր ի 1722 փետր. 14: Անտոնեան Միաբանութիւնը Արծիւեանի աղապարհեան համար ինչպէս ողի ի ըսին աշխատել է, անանկ ալ աշխատել է զայն դարձեալ իր թիւը Բերիա բերել տալու: Լուսով որ իրոյ մէջ հաւածանաց հաւոր մարեր է, և կաթողիկոսաց յաջողեր են Հ. Յակոբ Մուրաթեանի զործունէութեամբ քաղցին Ս. Աստուածածին եկեղեցին վերստանալ: 1739 Գիւլտ. 4ին հոն կը դիմէ Արծիւեան՝ երկու Անտոնեան քահանաներով, որք էին իր քննարկները Հ. Պետրոս և Հ. Գրիգոր Նիւիթ Ներսէսեանք: Հ. Պետրոս այս պատահաւ Միաբանութեան ընտել Արքայաճառ էր մահուամբ Հ. Արքայաճառ Աթթար և ոչ Արծիւեանի, որուն հակառակը կը կարծեն Ուղուրեան և Հաւատարմական, Ասոր կը վկայէ Հ. Ռաֆայէլ Թոմայեան Ուխտիս ժամանակակից պատմիչը թէ Եպիսկոպոս Արքայաճառ ձեռնադրութեան ի Տրապիզոն յեկեղեցին Ս. Հրեշտակապետաց Մարտիրոս հաստատուաց գնա (չՀ. Արքայաճառ) մեծաւոր նորադոյն արարեալ վանուց յաման Եւր. 1721 Ընդէ թէ Աթթար յառաջագոյն է եղեր արդէն մեծաւոր, զոր Եպիսկոպոսն ալ հաստատել է, Բայց ասոր 1733ին Բրէյմայ վանաց եկեղեցւոյ շինութեան հանգանակելու համար գրուած յարաւատարմական մէջ, այսպէս ունինք «Պատմաւ գրութեանն է զի հանգիստ և միաբնակցութեամբ ստորագրուած զի նպատակեցաւ ի շինութիւն Եկեղեցւոյ Տէր (վանք) Բրէյմայ, որ իցի յանուն Յիսուսի Փրկչին, և զբանտ որոյ վանն հանգիստ և միաբնակցութեամբ 400 զրուշ յինէն ի Արքայաճառ Եպիսկոպոսն, 200 զրուշ յինէն ի Տէր Արքայաճառ ի Մեծաւորէն» յիշատակեալ վանուցն: Արդ եթէ Արծիւեան հարուստ մէկ էր, ինչո՞ւ 400 դանակներ գումարը մի անգամէն չտար և պարտավորակ կը գէր, եթէ Մեծաւոր էր ինչո՞ւ մուրաթեան մէջ Արքայաճառ Աթթար մեծաւոր կը յիշատակուի և ոչ Արծիւեանի աւելի մեծ գործի մը կը ձեռնարկեն:

Մեռած էր այն ատեն Սոյ Դուկան Կաթողիկոսը, և միաբանաց մէջ գտնութիւն ծագելով՝ Աթթար վեց ամիս է ի վեր պառայ մնացած: Բերիացիք առկէն օգտուելով ընտրութեան կը փութան, որով Արքայաճառ Արծիւեան Բերիոյ Եպիսկոպոսը, Հ. Յակոբ Մուրաթեան, Հ. Պետրոս Ներսէսեան ընտրեալ Եպիսկոպոսները և Բրաքանտայէն ընտրելու Մամպոյ Մարգար Եպիսկոպոսով միասին Սիւնիոյ կաղմկով՝ զԱրծիւեանը կաթողիկոս կ'ընտրեն Կրկին: Այս ձեռնարկին միաբանած էին նաեւ փոքր Հայաստանու, Արարիքի և Եգիպտոսի մէջ յորուեալ ժողովուրդները, որով Հայ-Կաթողիկէ հաստատութիւնը շնորհիւ Անտոնեան Միաբանութեան Եկեղեցական նուիրապետութեան մը տէր կ'ըլլայ:

Օրթաքէոյ Կ. Պոլսոյ
ի վանս Ս. Անտոնի Մեծի Արքայի
20 Օգոստոս 1910

Հ. ՍԱՀԱԿ Վ. ՄԱՐԿԵԱՆ
Միաբան Անտոնեան

(*) Մեծաւոր և Արքայաճառ հոմանիշ են վանական լեզուին մէջ, ինչպէս և այժմ Միաբանութիւններէն ոմանք կը գործածեն «ընդհանրական մեծաւոր» Արքայաճառ տեղ, Հ. Պետրոսի մեծաւորութիւնն ալ այսպէս պէտք է իմանք, և ոչ երբեք տեղական, վասն զի այն ատեն ուրիշ վանք չունէինք:

«ԹՕՐՂԱԻՏ ԲԷՅԻՍ»

Տրէր դասատուները դադրած են այլև
Ուսումնարանը դասախօսելէ և անոնց տ